ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՏԱՎՈՒՇ ԳԱՎԱՌԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Բանալի բառեր *– Մովսես Խորենացի, Մեսրոպ Մաշտոց, Վարդգես մանուկ, Տուս-Քուստակ, Տավուշ գավառ, Խաղխաղ, Կուր գետ, Ուտիք*

Տավուշ գավառը Հայոց Արևելից կողմերը ներառող Արցախ և Ուտիք աշխարհների վարչական միավորներից է: Այն, ըստ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության, Ուտիքի ութ գավառներից հինգերորդն է[1]: Ակադեմիկոս Ս. Երեմյանն իրավացիորեն փաստել է, որ նրա անունը մեզ է հասել «Տուչքատակ» աղճատված ընթերցանությամբ և միանգամայն հավաստիորեն այն սրբագրել է «Տուս-Քուստակ» ձևով[2]: Եվ քանի որ «քուստակ» պարսկերեն նշանակում է գավառ[3], ստացվում է «Տուս գավառ»:

Իբրև բնաշխարհագրական միավոր այն հարավ-արևմուտքից հյուսիս արևելք ուղղությամբ ձգվել է Միափորի (Մուրղուզի) լեռնաշղթայից Կուր գետ, իսկ արևելքից արևմուտք՝ Գարդմանա լեռներից Հախումի (Պայտապարի) լեռնաշղթա: Արևմուտքում ու հյուսիս-արևմուտքում սահմանակցել է Աղուէ, իսկ արևելքում ու հարավ-արևելքում՝ Գարդման գավառին: Հարավից կից է եղել Այրարատի՝ հետագայում ստեղծված Վարաժնունիք գավառին:

Այսպիսով, այն ներառել է Հայաստանի Հանրապետության նախկին Տավուշի շրջանը (այժմ՝ Բերդ համայնքը), ինչպես նաև Ադրբեջանի Հանրապետության Ղազախի շրջանի որոշ մասը և Թովուզի շրջանի մեծ մասը:

Տավուշ գավառի՝ Վանի թագավորության կազմում ընդգրկված լինելու կամ նրա ազդեցության տակ գտնվելու մասին ուղղակի վկայությունները բացակայում են: Հ. Կարագյոզյանը շահեկան քննությամբ եզրակացրել է, որ Սարդուրի Բ-ի (Ք. ա. 764-735) Գանձասարի տարեգրության մեջ Ք. ա. 759 թ. դեպքերի առթիվ հիշատակված Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջանների բնակավայրերից Երիհան նույնական է Տավուշ գավառի Երգեվանք բերդի հետ[4]: Երիհան Էրիա(նի) տառադարձությամբ վկայվում է նաև Սարդուրի Բ-ի որդի Ռուսա Ա-ի (Ք. ա. 735-713) Ծովինարի արձանագրու-

---

[1] Տե՛ս Աշխահացոյց Մովսէսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց // Մատենագիրք Հայոց, հ. Բ., Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2153: Տե՛ս նաև էջ 2172, 2188:

[2] Տե՛ս **Երեմյան Ս. Տ.**, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 86:

[3] Տե՛ս **Մուրադյան Պ. Մ.**, «Տուհաց գավառի» տեղորոշման հարցի շուրջ // «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 1979, թիվ 1, էջ 248:

[4] Տե՛ս **Կարագեոզյան Յ.**, Սեպագիր տեղանուններ, Երևան, 1998, էջ 97-98:

թյան մեջ։ Ըստ դրա՝ Ռուսա Ա-ն մեկ տարվա ընթացքում Սևանա լճի ավազանում ոչ միայն ամրապնդել է իր պետության դիրքերը՝ վերահպատակեցնելով հոր գրաված չորս երկիր, այլև իրեն է ենթարկել ևս տասնինը երկրի, այդ թվում Էրիա(նի)ի արքաներին։ Ընդ որում, այդ երկրները գտնվել են «լճի (ծովի) մյուս կողմում, բարձր լեռներում»[1]։ Ի. Մեշչանինովը գտել է, որ արձանագրության մեջ հիշատակված տասնինը երկրները գտնվել են Սևանա լճից արևելք՝ Փոքր Կովկասի լեռներում և մասամբ Խորհրդային Ադրբեջանում[2]։ Ն. Հարությունյանը կարծել է, որ «լճի մյուս կողմում» ընկած երկրները հավանաբար գտնվել են Սևանա լճից հարավ-արևելք ու արևելք և համապատասխանել են Խորհրդային Հայաստանի Վարդենիսի, Կրասնոսելսկի ու Շամշադինի (Տավուշի) շրջաններին, ինչպես նաև մասամբ Խորհրդային Ադրբեջանի արևմտյան հատվածին[3]։ Հետագայում անդրադառնալով Էրիա(նի)ի տեղադրությանը՝ նա նշել է, որ այն պետք է փնտրել վերոհիշյալ տարածքներում[4]։ Ս. Եսայանն իր հերթին նկատել է, որ Ծովինարի արձանագրության մեջ «նշված երկրները կարող են տեղայնացվել Հայկական ԽՍՀ... Կրասնոսելսկի, Իջևանի, Շամշադինի (Տավուշի – *Ա. Շ.*) շրջանների, ինչպես նաև Ադրբեջանական ԽՍՀ Դաշքեսանի, Գետաբեկի ու հարևան շրջանների հետ»[5]։ Բ. Հարությունյանը, անդրադառնալով այս արձանագրությանը, նշել է, որ Արցախի և Ուտիքի տարածքները բնակեցված են եղել հայկական ցեղերով, որոնք այդտեղ «բնակվում էին անհիշելի ժամանակներից սկսած դեռ մինչև մ. թ. ա. VIII դարը»[6]։ Ինչպես տեսնում ենք, այս տեղորոշումներն անուղղակիորեն վկայում են Երուիա=Էրիա(նի)ն Երգեվանքի հետ նույնական լինելու մասին Հ. Կարագյոզյանի վերոհիշյալ պնդման և այն Տավուշ գավառում գտնվելու օգտին։

Ռուսա Ա-ն, չբավարարվելով վերանվաճված ու նորանվաճ երկրներից գերիներ տանելով, իր իշխանությունն ամրապնդելու նպատակով դրանց տարածքներում ամրոցներ է կառուցել[7]։ Սակայն եթե Սևանա լճի արևմտյան և հարավային ափերին այդ ամրոցների մնացորդները պահպանվել են, ապա Տավուշ գավառի տարածքում գոնե մինչ այժմ ոչինչ չի հայտնաբերվել։ Այս

---

[1] **Меликашвили Г. А.**, Урартские клинообразные надписи, Москва, 1960, 256, с. 329, **Арутюнян Н. В.**, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, 389, с. 296, **Salvini M.**, Corpus dei testi Urartei, vol. I, le iscrizioni su Pietra e Roccia i Testi, Roma, 2008, A 10-2, p. 497.

[2] Տե՛ս **Мещанинов И. И.**, Восточное Закавказье времен халдских завоеваний // «Вестник древней истории», 1937, № 1, с. 75-76:

[3] Տե՛ս **Арутюнян Н. В.**, Биайнили (Урарту), Ереван, 1970, с. 281-282:

[4] Տե՛ս **Арутюнян Н. В.**, Топонимика Урарту, Ереван, 1985, с. 258:

[5] Տե՛ս **Есаян С. А.**, Древняя культура племен северо-восточной Армении (III-I тыс. до н. э.), Ереван, 1976, с. 215:

[6] **Հարությունյան Բ. Հ.**, Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջ // «ՊԲՀ», 1994, թիվ 1-2, էջ 258:

[7] Տե՛ս **Меликишвили Г. А.**, նշվ. աշխ., 266, էջ 329, **Арутюнян Н. В.**, Корпус урартских клинообразных надписей, с. 296, **Salvini M.**, նշվ. աշխ., էջ 497:

հանգամանքը փաստում է, որ Վանի թագավորության տիրակալները Տավուշում հիմնավորապես չեն հաստատվել: Այն, ըստ Ս. Եսայանի, Հայաստանի հյուսիսարևելյան մյուս շրջանների նման եղել է Վանի թագավորության քաղաքական ու տնտեսական ազդեցության տակ և հավանաբար նրա կազմում չի ընդգրկվել, բայց ենթարկվել է հարկատվության[1]: Ն. Հարությունյանը ենթադրել է, որ այդ շրջաններում Ուրարտուի գերիշխանությունը ծայրահեղ դեպքում շարունակվել է մինչև Ռուսա Ա-ի կառավարման ավարտը[2]:

Վանի թագավորության անկումից հետո հայաբնակ Տավուշ գավառը ևս այդ շրջանների հետ ներառվել է Հայկազունի Երվանդականների թագավորության կազմում: Այդ մասին է վկայում Վարդգես մանկան մասին զրույցը: Պատմագիտական ու բանահյուսական առումներով դժվար գերագնահատելի այս զրույցը գրավել է հայագետների տարբեր սերունդների ուշադրությունը: Նրանց հետաքրքրել է ոչ միայն պատմական իրականությանն այդ զրույցի համապատասխանությունն ու նրանում հիշատակված Տուհաց գավառի տեղադրությունը, այլև ընդգրկած ժամանակաշրջանը: Նրանցից ոմանք այն համարել են Ք. ա. VI դարի առաջին կեսի իրադարձությունների արտացոլում[3], իսկ այլք՝ Ք. ա. III դարի վերջերի[4]: Այսինքն նրանց մի մասը զրույցում հիշատակված Հայոց Երվանդ արքային նույնացրել է Երվանդ Ա Սակավակյացի (Ք. ա. 580-570-ական թթ.), իսկ այլք՝ Երվանդ Դ վերջինի (Ք. ա. 220-201) հետ: Գ. Խալաթյանն այդ զրույցը համարել է պատմական ճշմարտությունը չարտացոլող[5]: Պ. Մուրադյանն այն թվագրել է Ք. ա. VI-III դդ. միջակայքով[6]:

Այս զրույցի համակողմանի քննությամբ հանդես եկած Աս. Մնացականյանը տվել է դրա հետ կապված վիճելի շատ հարցերի ճիշտ պատասխանը: Նա մասնավորապես համոզիչ ցույց է տվել, որ Վարդգես մանկան մասին զրույցն ունի իրական հիմքեր, և որ այն «պիտի դիտել որպես մ. թ. ա. VI դարի առաջին կեսին վերաբերող վկայություն»[7]: Նա նաև պնդել է, որ այդ զրույցը Երվանդ Ա Սակավակյացին նվիրված վեպից փրկված բեկոր է[8], ինչը լիովին ընդունելի է: Աս. Մնացականյանը բավարարվել է Տուհաց գավառի

---

[1] Տես՝ **Есаян С. А.**, նշվ. աշխ., էջ 218, 240:

[2] Տե՛ս **Арутюнян Н. В.**, Биайнили (Урарту), с. 282:

[3] Տե՛ս **Չամչեան Մ.**, Պատմութիւն Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 101-102, **Ինճիճեան Ղ.**, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 471, **Էմին Մ.**, Մովսէս Խորենացի եւ հին հայկական վեպ, Թիֆլիս, 1887, էջ 69, **Ալիշան Ղ.**, Քաղաքական աշխարհագրութիւն, Վենետիկ, 1859, էջ 65, *նույնի՝* Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 204:

[4] Տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Ա, Երևան 1966, էջ 129-130, հ. Դ, Երևան, 1968, էջ 74-75, «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1975, էջ 105:

[5] Տե՛ս **Халатянц Г.**, Армянский эпос, т. I, Москва, 1896, с. 332-337:

[6] Տե՛ս **Մուրադյան Պ. Մ.**, նշվ. աշխ., էջ 249:

[7] Տե՛ս **Մնացականյան Ա. Շ.**, Դիտողություններ «Վարդգես մանկան» վիպական հատվածի վերաբերյալ» // «ՊԲՀ», 1975, թիվ 2, էջ 218:

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 219:

մոտավոր, սակայն ընդունելի տեղորոշմամբ՝ գտնելով, որ անառարկելիորեն «Վարդգես մանկան հայրենիքը հյուսիսային Հայաստանում է»[1]: Նրան լրացրել է Պ. Մուրադյանը՝ Տուհաց գավառը նույնացնելով Տուս-Քուստակ գավառի հետ:

Ելնելով «Տուս»-ը «Տուհք»-ի հայցական հոլովը լինելու մասին Հ. Հյուբշմանի անհերքելի դիտարկումից[2], Պ. Մուրադյանը, իր հերթին նկատելով, որ «Տուք»-ի սեռականը «Տուաց»-ն է, ճիշտ եզրակացրել է, որ «**տուհ** ցեղանունից կազմված **Տուհք** գավառանունը նույն **Տուս-Տուքն** է՝ **հ** հագագի կորուստով»[3]: Հետագայում արդեն ենթարկվելով աստիճանական հնչյունափոխության՝ այն X դարի սկզբից սկսած սկզբնաղբյուրներում հիշատակվում է Տավուշ ձևով:

Անդրադառնալով Վաղարշ Ա-ի (117-140) գործունեությանը՝ Մովսես Խորենացին գրել է. «Սա պատեաց պարսպաւ և զհզօր աւանն Վարդգէսի, որ ի վերայ Քասախ գետոյ. զորմէ յառասպելսն ասեն. «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով, եկեալ նստաւ զՇրէշ բլրով, զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով, կռել կոփել զդուռնն Երուանդայ արքայի»[4]: Նա անմիջապես մեկնաբանել է. «Այս Երուանդ՝ առաջինն է, սակաւակեացն, որ ի Հայկազանց, զորոյ զքոյրն կին առեալ Վարդգէսի՝ շինեաց զաւանս զայս... որ եղև քաղաքագիւղ վաճառօք: Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ և հզօր պատուարաւ, և անուանեաց Վաղարշապատ, որ և Նոր քաղաք»[5]: Եվ քանի որ «կռել կոփել զդուռնն» նշանակում է այդ տուն խնամախոսության գնալ[6], ինչպես հետո պարզվում է Պատմահոր խոսքերից, Վարդգես մանուկը, այն է՝ քաջ, կտրիճ հերոս երիտասարդը[7], գնացել էր Երվանդ Ա-ի քրոջը կնության ուզելու: Ունենալով դրան հասնելու համար անհրաժեշտ արժանիքներ՝ նա մերժում չի ստացել, ապա հիմնել է Վարդգեսավան գյուղաքաղաքը՝ հետագայի Վաղարշապատը:

Վարդգես մանկան կերպարը բնութագրելիս Աս. Մնացականյանը դիպուկ նկատել է, որ «նրա անունն ու մականունն էլ, իրենց միասնությամբ, հագեցված են հայկականությամբ»[8]: Պ. Մուրադյանը նշել է, որ այդ զրույցում Տուհաց գավառի հիշատակությունն «ապացույց է, թե այդ գավառի հայ

---

[1] **Մնացականյան Ա. Շ.**, նշվ. աշխ., էջ 231:

[2] Տե՛ս **Hubschmann H.**, Die altarmenischen Ortsmanen, Amsterdam, 1969, S. 240, Fußnote 1:

[3] **Մուրադյան Պ. Մ.**, նշվ. աշխ., էջ 249:

[4] **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն հայոց: Քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երեւան, 1991, էջ 199 (այսուհետև՝ **Մովսէս Խորենացի**):

[5] Նույն տեղում, էջ 199-200:

[6] Տե՛ս **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 499-500, ծան. 199, **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Ա, էջ 128-129:

[7] Տե՛ս **Մնացականյան Ա. Շ.**, նշվ. աշխ., էջ 229-230:

[8] Նույն տեղում, էջ 231:

բնակչությունը նշանակալի մասնակցություն պետք է բերած լինի երկրի քաղաքական ու մշակութային անցուդարձերին՝ կենտրոնական Հայաստանում ձևավորված վեպի հիշատակությանն արժանանալով»[1]: Վարդգես մանկան մասին զրույցից նաև հետևում է, որ Հայկազունի Երվանդականներ թագավորության հյուսիսային սահմանը եղել է Կուրը, քանի որ հայկական տուհք ցեղով բնակեցված Տուհք=Տավուշ գավառն անվիճելիորեն ձգվել է մինչև այդ գետը:

Ս. Եսայանի կարծիքով՝ Հայաստանի հյուսիսարևելյան շրջանների, այդ թվում և Տավուշ գավառի վաղ հայկական կիկլոպյան ամրոցների՝ Ուրարտուի անկման ժամանակ նրա հակառակորդների կողմից չոչնչացվելը թույլ է տալիս ենթադրելու, որ դրանց տերերը մասնակցել են Ուրարտուի դեմ արշավանքներին[2]: Այս ենթադրությունն ընդունելի է, չնայած կարելի է նաև կարծել, որ պատճառն այդ շրջաններն ուրարտական պետության կազմում չլինելն է:

Վարդգես մանկան մասին զրույցը Հայկազունի Երվանդականներ թագավորության շրջանում Տավուշ գավառի մասին միակ ուղղակի գրավոր վկայությունն է: Հնագիտական պեղումները վկայում են, որ Ք. ա. VI դարի գավառի կիկլոպյան ամրոցները կանգուն են եղել: Այդ հանգամանքը Ս. Եսայանին հիմք է տվել պնդելու, որ Տավուշը Հայաստանի հյուսիսարևելյան մյուս շրջանների նման չի մասնակցել Աքեմենյան Պարսկաստանի դեմ ի թիվս այդ տերությանը ենթակա այլ երկրների, նաև Հայաստանի Ք. ա. 522-521 թթ. հզոր ապստամբությանը: Դարեհ I-ը (Ք. ա. 522-486), այդ ապստամբությունը մեծ դժվարությամբ ճնշելով հանդերձ, ճանաչել է Երվանդականների իշխանությունը Հայաստանում: Նրանք դարձան Աքեմենյան Պարսկաստանի հիմնական վարչական միավորներից մեկի՝ XIII սատրապության կառավարիչ սատրապները, որի հիմնական երկիրը Հայաստանն էր: Հայաստանի նման կարգավիճակը շարունակվեց շուրջ երկու դար:

Տավուշին սահմանակից Աղուէ գավառի Աստղի-բլուր, Բերդատեղ ու Տմբաղիր կիկլոպյան ամրոցները Ք. ա. V դարի առաջին կեսին, իսկ Տավուշ գավառի Նորաշենի, Չինչինի ու Ծաղկավանի կիկլոպյան ամրոցները, ելնելով դրանցում հայտնաբերված հնագիտական նյութի հստակ թվագրությունից, Ք. ա. V դարի վերջերին ավերվել ու հրդեհվել են[3]: Ս. Եսայանն այս իրողությանը երկու իրարամերժ բացատրություններ է տվել: Նա, մեկ հիմք ընդունելով այդ ամրոցներում «սկյութական» տիպի ծռված նետասլաքների առկայությունը, ենթադրել է, որ դրանք ավերողները սկյութական ցեղեր են[4]: Ապա, ելնելով այդ նետասլաքները Ք. ա. VI դարից հետո տարածված չլինե-

---

[1] **Մուրադյան Պ. Մ.**, նշվ. աշխ., էջ 249:
[2] Տե՛ս **Есаян С. А.**, նշվ. աշխ., էջ 218:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 63:

լու հանգամանքից և գերեզմաններից կողոպտվելուց հետո օգտագործվելու սովորույթից, կարծիք է հայտնել, որ վերոհիշյալ ամրոցների ավերումն ու հրդեհումը կարող են գրավոր սկզբնաղբյուրներում չվկայակոչված տեղային ապստամբությունների կամ միջցեղային ընդհարումների հետևանք լինել[1]:

Այս իրադարձությունների հետ կապված հարցերի պատասխանը դժվար է գտնել, մանավանդ որ ավերակված բերդերում հայտնաբերված նետերից բոլորի «սկյութական» տիպի լինելու կամ չլինելու մասին՝ դրանք պեղած Ս. Եսայանը լռել է: Բոլոր դեպքերում ակնհայտ է, որ Ք. ա. V դարի ամբողջ ժամանակահատվածում նույն հանգամանքների բերումով Տավուշում և հարակից շրջաններում տեղի են ունեցել բնականոն կյանքը խաթարած իրադարձություններ:

Ալեքսանդր Մակեդոնացու (Ք. ա. 336-323) կողմից Աքեմենյան տերության կործանումից հետո Մեծ Հայքի սատրապ Օրոնտես-Երվանդը (Երվանդ Գ, Ք. ա. 331-300) և Փոքր Հայքի կառավարիչ Միթրաուստեսն իրենց անկախ թագավորներ հռչակեցին, որով Հայաստանի անկախությունը վերականգնվեց: Տավուշ գավառն այն ներառող Ուտիք աշխարհի հետ շարունակեց մնալ Մեծ Հայքի անբաժան մասը: Դա է վկայում Մովսես Խորենացին, երբ վերապատմում է Երվանդ-Արտաշեսյան զրույցը, ըստ որի՝ Հայոց գահին տիրանալու համար իր դայակ Սմբատի հետ Արտաշեսի (Արտաշես Ա, Ք. ա. 189-160) Հայաստան զորքով մտնելու մասին Երվանդ Դ Վերջինը տեղեկանում է «յՈւտէացւոց գաւառին»[2], որտեղ ձմեռել էր: Երվանդի՝ Ուտիքում ձմռանը գտնվելու փաստն ակնհայտ է Պատմահոր «Եւ էին աւուրք գարնայնոյ»[3] խոսքերից, ինչն իր հերթին ենթադրում է, որ Ուտիքի մի մասն արքունի տիրույթ էր:

Արտաշեսին ու Սմբատին դիմագրավելու համար զորք հավաքելու նպատակով Երվանդը «եթող անդէն (Ուտիքում – *Ա. Շ.*) զբազումս ի նախարարացն կողմնապահս, և ինքն գնաց ի քաղաքն իւր (Երվանդաշատ – *Ա. Շ.*) փութանակի»[4]: Սմբատն իր հերթին, Երվանդի ձմեռանոցի տեղն իմանալով՝ «հանդերձ մանկամբն Արտաշիսիւ աճապարէր հասանել ի սահմանս Ուտէացւոց: Ընդ առաջ նորա ելին զօրք այնր կողմանն, նա և նախարարքն զորս եթող Երուանդ»[5]: Ինչպես հետևում է Մովսես Խորենացու վերապատմածից, Ուտիքում պահվում էր զորք, որը կոչված էր պաշտպանելու Հայաստանի հյուսիս-արևելյան սահմանների այդ հատվածը: Ընդ որում, Ուտիքի տարածքով երկրին սպառնացող վտանգն այնքան իրական ու մեծ էր, որ Երվանդը, փոխանակ այդ զորքն Արտաշեսին ու Սմբատին դիմագրավելու համար

---

[1] Տե՛ս **Есаян С. А.**, նշվ. աշխ., էջ 12-13, 218:

[2] **Մովսէս Խորենացի**, էջ 169:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում, էջ 170:

օգտագործելու, կողմնապահ նախարարների գլխավորությամբ թողել էր այնտեղ։

Հետագայում Արշակունիների ձմեռանոցը Ուտիքում լինելու մասին Ագաթանգեղոսի ու Ուխտանեսի հաղորդումները[1] հիմք են տալիս անվարան պնդելու, որ այնտեղ է եղել նաև Արտաշեսյանների ձմեռանոցը։ Ի տարբերություն Ուխտանեսի, որը բավարարվել է լոկ Ուտիքը Խոսրով Ա Արշակունու (211-259) ձմեռանոցը լինելու իրողությունը փաստելով, Ագաթանգեղոսը մատնանշել է նաև կոնկրետ տեղը՝ Խաղխաղ բնակավայրը։ Բ. Հարությունյանն ու Ա. Հակոբյանն իրավացիորեն Խաղխաղը տեղորոշել են Կուրի՝ Տավուշով հոսող Հախում վտակի գետաբերանի մոտ՝ այդ գետի աջ ափին[2]։ Եղիշեն ու Մովսես Կաղանկատվացին ևս այն համարել են քաղաք, բայց հիշատակել են իբրև Աղվանից թագավորների ձմեռանոց[3]։ Ընդ որում, վերջինս բառացիորեն կրկնել է նախորդին։ Ղազար Փարպեցին այն ներկայացրել է իբրև «գեղոն, որ կոչի Խաղխաղ, յերկրին Աղուանից»[4]։ Վերջին երեք պատմիչները, Խաղխաղն Աղվանից թագավորների ձմեռանոցը համարելով կամ Աղվանքում տեղակայելով, արտացոլել են 450 թ. իրողությունը։ Ինչ վերաբերում է Եղիշեի ու նրանից օգտված Մովսես Կաղանկատվացու կողմից Խաղխաղն իբրև քաղաք, իսկ Ղազար Փարպեցու կողմից իբրև գյուղ հիշատակմանը, ապա դա հավանաբար վերջինիս՝ երկը շարադրելու ժամանակ (480-ական թվականների երկրորդ կես) այդ բնակավայրը, տնտեսապես քայքայվելով, գյուղի վերածվելու հետևանք է։ Լեոնտի Մրովելին ևս Խաղխաղը Հայոց թագավորների ձմեռանոց է համարում և տեղադրում Հայաստանի սահմաններում[5]։ Հայկազունի Երվանդակաների թագավորության ժամանակաշրջա-

---

[1] Տե՛ս Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի (այսուհետև՝ **Ագաթանգեղոս**), Երևան, 1983, էջ 30, **Ուխտանէս եպիսկոպոս**, Պատմութիւն Հայոց, (այսուհետև՝ **Ուխտանէս եպիսկոպոս**) // Մատենագիրք հայոց, ԺԵ. հ. Ժ. դար, պատմագրութիւն երկու գրքով, գիրք Բ., Երևան, 2011, էջ 488։

[2] Տե՛ս **Հարությունյան Բ. Հ.**, Խաղխաղի ճակատամարտը (450 թ.) // «Հայկական բանակ», 2007, թիվ 4, էջ 98-100, **Յակոբեան Ա.**, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում և Հայոց Արևելից կողմանքում անտիկից մինչև ԺԳ դար (պատմա-աղբյուրագիտական քննութիւն), Երևան, 2020, էջ 26։ Խաղխաղի տեղորոշման շուրջ տողերիս հեղինակի կատարած նորովի քննությունը ևս վկայում է հոգուտ այս հետազոտողների կատարած եզրահանգման։

[3] Տե՛ս Եղիշեի Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957, էջ 75, **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, Երևան, 1988, էջ 114։

[4] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թուղթ առ Վահան Մամիկոնեան։ Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի, Ստ. Մալխասյանցի, Երևան, 1982, էջ 150։

[5] Տե՛ս **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 163։

նում Տավուշի մասին մեզ հասած տեղեկությունները վերոբերյալներով սահմանափակվում են։

Արտաշեսյանների օրոք (Ք. ա. 189 – Ք. հ. 1) խնդրո առարկա գավառի պատմության մասին գրավոր որևէ վկայության չկա։ Այդուհանդերձ անվիճելի է, որ այն Մեծ Հայքի թագավորության անբաժան մասն էր։ Տավուշում այդ ժամանակներում տնտեսական զարգացման, հատկապես ապրանքային արտադրության ու դրամական լայն շրջանառության մասին է վկայում 1957 թ. Տավուշ գյուղին մերձակա Կածարեթ կոչվող հնավայրից պատահականորեն հայտնաբերված գանձի երկու հավաքածուն՝ բաղկացած համապատասխանաբար 102 և 62 հատ դրամներից։ Այն մասնավորապես պարունակում էր Տիգրան Բ-ի (Ք. ա. 95-55) չորս արծաթադրամ և հռոմեական դենարներ[1]։ Տավուշ բերդի մերձակայքում գտնվող հին գերեզմանոցում ընկած սրբատաշ խարիսխը վկայում է շրջակայքում հելլենիստական կառույցի երբեմնի գոյությունը, ինչը փաստում է, որ հելլենիստական մշակույթը նաև Տավուշ է թափանցել։ Ամենայն հավանականությամբ հռոմեական զորավար Գնեոս Պոմպեոսը Տիգրան Բ-ի հետ Ք. ա. 66 թ. Արտաշատում պայմանագիր կնքելուց հետո Կողքիս արշավելիս իր զորքի հիմնական ուժերով ձմեռել է Խաղխաղի շրջանում ու այդտեղ հաղթել իր դեմ հարձակվելու նպատակով Կուրը գետանցած աղվանական զորքերին[2]։

Արշակունյաց շրջանում ևս Տավուշի մասին ուղղակի գրավոր հիշատակությունները բացակայում են։ Ուստի գավառի այդ ժամանակվա պատմության մասին կարելի է որոշ պատկերացում կազմել միայն այն ներառող Ուտիքի պատմության միջոցով։ Տրդատ Ա-ն (66-88) ալանների ճնշմամբ Այսրկովկաս մտած և բուն Աղվանքի տարածքում հաստատված ու թագավորություն ստեղծած գարգարների ներխուժումները կասեցնելու նպատակով՝ ստեղծել էր Գարդմանացվոց, Ուտեացվոց ու Ծավդեացվոց ռազմական կուսակալությունները[3]։ Առաջին երկուսը ստեղծվել էին Ուտիքում, իսկ երրորդն ընդգրկում էր Արցախի տարածքը։ Հյուսիսարևելյան Հայաստանում ստեղծված այս ռազմավարչական միավորները սկզբնական շրջանում ղեկավարվում էին արքունի պաշտոնյաների կողմից, իսկ հետագայում վերածվեցին ժառանգական իշխանությունների[4]։

Մովսես Խորենացին, պատմելով Վաղարշակ (այն է՝ Տրդատ Ա) թագավորի կողմից Հայկ Նահապետից սերող Սյունյաց նախահայր Սիսակի

---

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», 20.VIII. 1957, **Մուշեղյան Խ. Ա.**, Հայաստանի դրամական գանձերը, Երևան, 1973, էջ 52, 54։

[2] Տե՛ս **Ցակոբեան Ա.**, նշվ. աշխ., էջ 26-27։ Տե՛ս նաև **Վարդանյան Ա.**, Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն, Երևան, 2013, էջ 45։

[3] Տե՛ս **Հարությունյան Բ. Հ.**, Այսպես կոչված Աղվանքի էթնիկ և քաղաքական պատմության մի քանի հարցեր // «Վեմ», 2011, թիվ 9, էջ 47։

[4] Տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 113։

սերնդից Առանին (որից, ըստ նրա, ծագել են Գարդմանացւոց, Ուտեացւոց ու Ծավդեացւոց իշխանությունները) «մեծ և անուանի և բազմաբիւր զարևելից հիւսիւսոյ կողմանն» կողմնակալ նշանակելու մասին, նշում է, որ նա «ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ»[1]: Պատմահոր այս հաղորդումից հետևում է, որ Ուտիքի Տավուշ և Աղուէ գավառները ներառվել են Գարդմանացվոց նախ ռազմական կուսակալության, ապա իշխանության կազմում:

Արշակունիների ձմեռանոցը Խաղխաղում գտնվելու հանգամանքը և Վիրքի ու Աղվանքի սահմանագլխին ընկած այդ գավառների դիրքի ռազմավարական կարևորությունը թույլ են տալիս կասկածանքով մոտենալու Մովսես Խորենացու այդ վկայությանը: Սակայն չի բացառվում, որ այդպես է եղել, և այդ գավառները Գարդմանացվոց ռազմական կուսակալությունը ժառանգական իշխանության վերածվելուց հետո արքունապատկան են դարձել: Բոլոր դեպքերում, դրանք III դարի կեսերին արքունի սեփականություն էին, քանի որ Ագաթանգեղոսի վկայությամբ՝ Խոսրով Ա-ին (227-256) սպանելու նպատակով Հայաստան եկած Անակ Պարթևը «յանդիման եղև թագաւորին Խոսրովու յՈւտի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի, ի ձմեռոցս արքայութեանն Հայոց»[2]: Դա է պատճառը, որ այդ գավառները Փավստոս Բուզանդի կողմից չեն հիշատակվում 360-ական թվականների առաջին կեսին Արշակ Բ-ի (350-368) դեմ ակնհայտորեն պարսից դրդմամբ ապստամբած գավառների ու աշխարհների շարքում: Պատմիչը, դրանք թվարկելով, մասնավորապես գրում է, որ ապստամբել էին նաև «Գուգարաց բդեշխն, և յետ սորա Զորայ (Զորագետ – *Ա. Շ.*) գաւառին տէրն, և Կողբայ գաւառին տէրն, և ընդ նոսա Գարդմանաձորայ տէրն»[3]: Այսպիսով, Զորագետի, Կողբովորի և Գարդմանաձորի միջև ընկած Աղուէն ու Տավուշը չէին ապստամբել, ինչը բացատրվում է դրանց՝ արքունի տիրույթ լինելով: Չնայած Արշակ Բ-ի դեմ ընդվզածները պատմիչի վկայությամբ «չոգան գնացին առաջի կացին թագաւորին Պարսից Շապհոյ»[4], այսինքն՝ Շապուհ II-ին (309-379) հպատակություն հայտնեցին: Իր հերթին, ինչպես ճիշտ նկատել է Բ. Հարությունյանը՝ «Աղվանից թագավորությունն ունենալով իր որոշակի քաղաքական ծրագրերն ու օգտվելով Հայաստանի դեմ պարսիկների սանձազերծած պատերազմի հետևանքներից, ձեռնարկում է լայն էքսպանսիոն միջոցառումներ»[5]:

---

[1] **Մովսես Խորենացի**, էջ 113:

[2] **Ագաթանգեղոս**, էջ 30:

[3] Փավստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն Հայոց, բնագիրը՝ Ք. Պատկանյանի (այսուհետև՝ **Փավստոս Բուզանդ**), Երևան, 1987, էջ 246:

[4] Նույն տեղում:

[5] **Հարությունյան Բ. Հ.**, Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչաքաղաքական կացությունը 387-451 թվականներին // «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ «ԲԵՀ»), 1976, թիվ 2, էջ 81:

Երբ 371 թ. հայ-հռոմեական զորքերը Ձիրավի ճակատամարտում հաղթեցին պարսից բանակին, և երկրում իրավիճակը կայունացավ, սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը հաջողությամբ ձեռնամուխ եղավ Արշակ Բ-ի գահակալության վերջին շրջանում Հայաստանից անջատված, այդ թվում և Աղվանից թագավորությանն անցած ծայրագավառները հետ գրավելուն: Նա նաև «Առնէր պատերազմ ընդ երկիրն Աղուանից, հարկանէր զնոսա ի հարուածս անհնարինս: Եւ թափէր ի նոցանէ բազում գաւառս զոր հատեալ էր նոցա ի նոցանէն. զՈւտի, Շակաշեն և զձորն Գարդմանայ, զԿողթ և այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառ: Եւ զԿուր գետ՝ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին»[1]: Փավստոս Բուզանդի այս արժեքավոր ու արժանահավատ հիշատակության «և այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառ» հատվածից հետևում է, որ Աղվանից թագավորությունը, իրոք, տիրացել էր նաև արքունապատկան Աղուէ ու Տավուշ գավառներին: Կասկածից վեր է, որ դրանք վերադարձվել են իրենց նախկին իրավական կարգավիճակին, այսինքն՝ արքունապատկան էին դարձել:

Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև 387 թ. Հայաստանի բաժանումից հետո Ուտիքը և, հետևաբար, նրա մաս կազմող Տավուշ գավառը մնացին Արևելահայկական թագավորության կազմում: Ընդ որում, մինչ այդ, այն է՝ թագավորության անկումը և պատմական ասպարեզից Արշակունիների հեռացումը, Տավուշը շարունակեց մնալ արքունապատկան տիրույթ:

Մեսրոպ Մաշտոցը 420-ական թվականների առաջին կեսին (ստույգ՝ 422 թ. հետո) Աղվանքում, Գարդմանում ու Տաշիրում զբաղված էր «մնացեալ արմատ դառնութեան հեթանոսական աղանդոյն»[2] դեմ պայքարելով: Աղվանքում իր առաքելությունն ավարտելուց հետո նա մեկնեց Գարդման, որտեղից անցավ Վիրք, իսկ այնտեղից՝ Տաշիր[3]: Այդտեղ հասնելու համար նա Գարդմանից պետք է մտներ Տավուշ, ապա Աղուէով անցներ Վիրք, իսկ այնտեղից՝ Տաշիր: Չնայած սկզբնաղբյուրների լռությանը՝ պարզ է, որ հեթանոսությունը գլուխ էր բարձրացրել նաև Տավուշում ու Աղուէում, ինչը չէր կարող անտեսվել Մեսրոպ Մաշտոցի կողմից:

Այդուհանդերձ, քրիստոնեությունը Տավուշում խոր արմատներ էր ձգել: Դրա վկայությունն է Այգեձոր գյուղում Ախնջիի աջ ափին գտնվող V դարով թվագրվող Սուրբ Հռիփսիմե եկեղեցին: Այն Տավուշ գավառի, թեկուզ կիսավեր վիճակում, բայց կանգուն մեզ հասած հնագույն քրիստոնեական հու-

---

[1] **Փավստոս Բուզանդ**, էջ 320, 322:

[2] **Մովսէս Խորենացի**, էջ 340:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 340-341, **Կորյուն**, Վարք Մաշտոցի, բնագիրը ձեռագրական այլ ընթերցումներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941, էջ 70, 72, 74:

շարձանն է[1]։ Հայաստան աշխարհի բոլոր բնակավայրերում եկեղեցիներ կառուցած և ամենուր քահանաներ կարգած[2] Գրիգոր Լուսավորչի կողմից IV դարի սկզբին Հայոց Առաքելական եկեղեցու նվիրապետությունը ստեղծելիս Տավուշը, ի տարբերություն Գարդմանի[3], եպիսկոպոսական աթոռ չունեցավ։ Դա բացատրվում է նրանով, որ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո հաստատված թեմական բաժանման հիմքում ընկած էր երկակի սկզբունք՝ երկրի ըստ աշխարհների վարչական բաժանումն ու առավել նշանավոր իշխանական ընտանիքներին եպիսկոպոսական թեմեր ունենալու իրավունք տալը[4]։ Այդ սկզբունքներից առաջինով պայմանավորված՝ Գարդմանի իշխանությանը սահմանակից Ուտեացվոց իշխանությանը և արքունապատկան Աղուէ ու Տավուշ գավառներին եպիսկոպոսական աթոռ չտրվեց։ Արդյունքում Գարդմանի եպիսկոպոսի իրավասությունը տարածվում էր ամբողջ Ուտիքի վրա[5]։

Այսպիսին է Տավուշ գավառի պատմությունը՝ Վանի թագավորությունից Արշակունյաց թագավորության անկումն ընկած ժամանակաշրջանում։

Արտաշես Շահնազարյան – *Տավուշ գավառի պատմությունից*

Տավուշ գավառը Մեծ Հայքի Ուտիք նահանգի հինգերորդ վարչական միավորն է։ Այն ձգվել է Միափորի լեռնաշղթայից Կուր գետ և Գարդմանա լեռներից Հախումի (Պայտապարի) լեռնաշղթա։ Ի սկզբանե հայաբնակ այդ գավառը սկզբում գտնվել է Վանի թագավորության տնտեսական ու քաղաքական ազդեցության տակ։ Այնուհետև ներառվել է Հայկազունի Երվանդականների թագավորության կազմում։ Ինչպես Երվանդունիների, այնպես էլ Արտաշեսյանների ու Արշակունիների օրոք Տավուշ գավառը եղել է արքունապատկան տիրույթ ու հանդիսացել արքունի ձմեռանոց։ Իր ռազմավարական դիրքով պայմանավորված՝ այդ ժամանակաշրջանում այն կարևոր դեր է խաղացել Հայաստանի կյանքում։

---

[1] Տե՛ս **Ջուհարյան Բ. Գ.**, Սովետական Հայաստանի պատմական հուշարձանները, Երևան, 1982, էջ 99-100։

[2] Տե՛ս **Ագաթանգեղոս**, էջ 416։

[3] Տե՛ս **Ուխտանէս եպիսկոպոս**, էջ 503։

[4] Տե՛ս **Հարությունյան Բ. Հ.**, Հայոց եկեղեցու թեմական բաժանումը Գրիգոր Լուսավորչի հովվապետության շրջանում // «ՊԲՀ», 2000, թիվ 2, էջ 126։

[5] Հմմտ. **Հակոբյան Պ.**, Եպիսկոպոսական աթոռները Գրիգոր Լուսավորչի օրերին // «Էջմիածին», 1999, թիվ Գ, էջ 61։

Арташес Шахназарян – *Из истории Тавушского гавара*

Ключевые слова *– гавар, царство, население, провинция, роль, административная единица, царская резиденция, стратегическое положение*

Тавушский гавар – пятая административная единица Утикской провинции Мец Айка. Тавуш простирался от Миапорского хребта к реке Кура и от Гардманских гор к Ахумскому (Пайтапарскому) хребту. Изначально этот гавар с армянским населением находился под экономическим и политическим влиянием Ванского царства. Затем он был включен в состав Царства Ервандидов-Айказуни. Как при Ервандидах, так и при Арташесидах и Аршакидах Тавушский гавар принадлежал царям: был зимней царской резиденцией. Благодаря своему стратегическому положению, Тавуш играл важную роль в жизни Армении того времени.

Artashes Shahnazaryan – *From the History of Tavush Canton*

Key Words *– Canton, kingdom, reign, role, dynastie, administrative unit, mountain range, royal domain, residence*

Tavush canton is the fifth administrative unit of Utik province of Great Armenia. It used to stretch from the Miapor mountain range to the Kura River and from the Gardmana Mountains to the Hakhum (Paytapar) mountain range. Originally inhabited by Armenians, this canton was initially under the economic and political influence of the Kingdom of Van. Later it was included in the kingdom of Haykid Yervanduni. During the reign of the Orontid, the Artaxiad and the Arsacid dynasties, Tavush canton was a royal domain and was a royal winter residence. Due to its strategic position, it played an important role in the life of the then Armenia.

Ներկայացվել է 02.02.2021
Գրախոսվել է 15.02.2021
Ընդունվել է տպագրության 14.04.2021